Ջրի կոտրված շիշը

Քեյդին ծարավ էր: Սոֆյան ինչպե՞ս կարող էր օգնել նրան:

Նոել Լամբերթ Բարուս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Սիերա Լեոնեում:

Սոֆյան ուշադիր լսում էր, երբ ուսուցիչը գրատախտակի վրա բացատրում էր մաթեմատիկական խնդիրը:

«Այսպիսով, ինչի՞ է հավասար ինը անգամ չորս», - հարցրեց ուսուցիչը:

Սոֆյան բարձրացրեց ձեռքը: «Երեսունվեց»,- ասաց նա:

Ուսուցչուհին ժպտաց: «Ճիշտ է, Սոֆյա»:

Դասից հետո տուն գնալու ժամանակն էր: Սոֆյան քայլում էր իր ընկերների հետ: Նրանք բոլորը հանեցին իրենց ջրի շշերը, որպեսզի խմեին մնացած ջուրը: Այսօր շատ շոգ էր:

Նկարները՝ Սեբիսա Կաշիկագիի

Բայց Սոֆյան տեսավ մի տարօրինակ բան: Նրա ընկերուհին՝ Քեյդին, ջուր չէր խմում: Նա պարզապես լուռ քայլում էր նրանց կողքով:

«Քեյդի, որտե՞ղ է քո ջրի շիշը», - հարցրեց Սոֆյան: Դասերի ավարտից հետո բոլորը միշտ ծարավ էին լինում:

«Ես կոտրեցի այն երեկ, իսկ նորը չեմ կարող ձեռք բերել»,- պատասխանեց Քեյդին: «Ուստի, ես չեմ կարող ջուր բերել դպրոց»:

Սոֆյան նայեց իր ջրի շշին: Նա շատ կուզեր կիսվել: Բայց իր ջուրը վերջացել էր:

Ամբողջ օրը Սոֆյան մտածում էր Քեյդիի և նրա կոտրված ջրի շշի մասին: Հեշտ չէր մաքուր ջուր գտնել այնտեղ, որտեղ նրանք ապրում էին: Երեխաներից շատերը ստիպված էին ջրի մեկ շիշն օգտագործել ամբողջ տարին: Նրանք լցնում էին այն տանը մաքուր ջրի մեծ տարայից: Այլ ջուր խմելով դուք կարող էիք հիվանդանալ: Եթե Քեյդին չուներ ջրի շիշ, նա չէր կարող ջուր բերել տնից՝ դպրոցում խմելու համար:

Հաջորդ առավոտ Սոֆյան մտածում էր, թե ինչպես կարող էր օգնել Քեյդիին: Սոֆյայի ընտանիքն ուներ ջրով լի մի քանի պլաստմասե շիշ: Սոֆյան իր ուսապարկում դրեց դրանցից մեկը՝ իր մետաղյա շշի կողքին: Պայուսակը մի փոքր ծանրացավ, բայց նրա համար դա խնդիր չէր:

Երբ դպրոց հասավ, նա գտավ Քեյդիին:

«Քեյդի, դու արդեն ունե՞ս ջրի նոր շիշ»,- հարցրեց Սոֆյան:

Քեյդին տարուբերեց գլուխը՝ աչքերը խոնարհած:

«Ոչինչ»,- ասաց Սոֆյան: «Ես բերել եմ քեզ համար»:

Նա Քեյդիին տվեց ջրի շիշը: Քեյդին ժպտաց:

«Շնորհակալություն, Սոֆյա»: Քեյդին ամուր գրկեց իր ընկերուհուն:

Դասերի ժամանակ Քեյդին խմում էր իր ջրի շշից այլ երեխաների հետ միասին: Սոֆյան ուրախ էր տեսնել, որ իր ընկերուհին ստիպված չէ ծարավ մնալ:

Այդ շաբաթ ամեն օր Սոֆյան ջրի մի լրացուցիչ շիշ էր բերում իր ընկերուհու համար: Ապա մի առավոտ Սոֆյայի մայրիկը բարձրացրեց նրա պայուսակը:

«Հը՜մ»,- ասաց մայրիկը: «Այն կարծես սովորականից ծանր է թվում»: Նա բացեց պայուսակը և հանեց ջրի լրացուցիչ շիշը:

«Դու իսկապե՞ս ուզում ես ջրի այս լրացուցիչ շիշը տանել դպրոց, Սոֆյա», - հարցրեց մայրիկը:

Սոֆյան գլխով արեց: «Քեյդիի ջրի շիշը կոտրվել է, իսկ նորը նա չի կարող ձեռք բերել: Ուստի, նա դպրոցում ընդհանրապես ջուր չուներ»:

«Որքա՞ն ժամանակ է, որ դու լրացուցիչ ջուր ես տանում նրա համար»,- հարցրեց մայրիկը:

«Ընդամենը այս շաբաթ»,- ասաց Սոֆյան: «Ես չէի ուզում, որ Քեյդին ծարավ մնար»:

Մայրիկը ժպտաց: «Դու շատ բարի ես գտնվել՝ մտածելով քո ընկերոջ մասին: Դա այն է, ինչ Հիսուսը կաներ: Երջանիկ եմ տեսնել, որ դու նմանվում ես Հիսուսին»: Նա գրկեց Սոֆյային: «Եվ կարծում եմ, որ ես մեկ այլ եղանակ գիտեմ, որով կարող ենք օգնել»:

Մայրիկը Սոֆյային տվեց ջրի մետաղյա շիշ: «Սա տուր քո ընկերուհուն, որպեսզի նա շարունակ կարողանա օգտագործել այն: Այդպիսով, դու ստիպված չես լինի ամեն օր տանելու պլաստմասե մի շիշ»:

«Իսկապե՞ս»,- հարցրեց Սոֆյան:

Մայրը գլխով արեց: «Այո: Պարզապես խնդրիր նրան լավ պահել սա»:

Սոֆյան ջրի շիշը տարավ դպրոց: Առաջին բանը, որ նա արեց, շիշը Քեյդիին տալն էր:

«Օ՜հ»,- ասաց Քեյդին: «Շնորհակալություն, Սոֆյա»: Քեյդին գրկեց նրան:

Սոֆյան ջերմ զգացումներ ունեցավ: Նա գիտեր, որ օգնել էր իր ընկերոջը՝ ինչպես Հիսուսը կաներ: ●

Ինչպե՞ս եք դուք օգնել ինչ-որ մեկին: